


-438-

ՆՈՐ ՈՐԵՆՔՆԵՐ  
ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԵՎՏՐԻ  
ԾԱՎԱՄԱՆ ՄԱՍԻՆ



ՊԵՏՀՐԱՏ 1932 ՅԵՐԵՎԱՆ

22 DEC 2017  
137

-881-

## ՎՈՐՈՇՈՒՄ

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐԴՐԴԻ  
ՈՒ ՀԱՄԿ(Ք)Կ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՑԻ

«1932 թ. բերքի հացամբերման պլանի յև կոլտեսե-  
սուրյունների հացի առելքտի ծավալման մասին»

1. Անհաջողական տնտեսության սիստեմի նկատ-  
մամբ կոլտնտեսական ու խորհունտեսական սիս-  
տեմի տարած հաղթանակի և գլուղի կուլակալին  
տարբերի ջախջախման հիման վրա, — ԽՍՀՄ ն  
յերկու տարում հասավ հացահատիկալին տնտե-  
սության այնպիսի ծավալման, ցանցերի տարա-  
ծության ընդարձակման ու հացահատիկի ընդհա-  
նուր արտադրանքի այնպիսի աճման, վոր 1928  
թվականի բերքից մթերված 660 միլիոն փուլ  
հացահատիկի փոխարեն (ազունավարձի հետ միա-  
սին), 1931 թվականին մթերումները հասան 1350  
միլիոն փուլ հացահատիկի (աղունավարձի հետ  
միասին), իսկ 1930 թվականին, չնայած յերաշ-



1-3380gj

տին՝ 1400 միլիոն փթի (աղունավարձի հետ  
միասին):

Այդ հաջողությունները բացատրվում են նախ  
և առաջ նրանով, վոր կոլտնտեսությունները,  
վորպես միացյալ խոշոր տնտեսությունները,  
հնարավորություն ստացան՝ մեքենա-տրակտորա-  
վին կայանների միջոցով կիրառել և ոգտագործել  
տրակտորներ և մեքենաներ. ընդարձակել ցանքի  
առաջածությունը և բարելավել գործի ազրութեա-  
նիկական դրվագքը, իսկ խորհտնտեսությունները  
վերացլեցին հացահատիկի խոշորագույն գործա-  
բանների, վորոնք պետության համար ապահովում  
են տարեց-տարի ավելացող հացահատիկակալին-  
ֆոնդ:

Շնորհիվ Լենինյան կուսակցության քաղաքա-  
կանության իրականացման, լերկիրը դուրս յեկավ  
հացահատիկալին տնտեսության ճգնաժամից և  
անցյալ տարի ԽՍՀՄ-ի արևելյան շրջաններում  
առաջացած լերաշտի դժվարությունները հաղթա-  
հարում ե ավելի հաջող, քան այդ տեղի յեռնե-  
ցել նախորդ յերաշտ տարիներին, իերբ գեռ մեր  
լերկրում գերակշռում եր մանր գյուղացիական  
տնտեսությունը:

2. Միաժամանակ արդյունարերության ասպա-  
րիզում հնգամյակի հաջող իրականացման շնորհիվ՝

Խորհրդային Միությունն ավելի ու ավելի մեծ  
հնարավորություններ և ստանում արդյունաբե-  
րական ապրանքներ արտադրելու ասպարիզում  
թե կոլտնտեսությունների արտադրական կարիք-  
ներին և թե գյուղի աշխատավորների անձնական  
պահանջներին բավարարելու համար:

Արդյունարերական ապրանքների քանակի և  
պյուղում հացահատիկի արտադրության այդ ան-  
ընդհատ անձան շնորհիվ, ավելանում են նաև  
կոլտնտեսական առևտուրը ծավալիլու հնարավո-  
րությունները: Կոլտնտեսական առևտուրը գնալով  
ավելի ու ավելի կարևոր լրացուցիչ աղբյուր և  
դառնում քաղաքներին գյուղատնտեսական ար-  
տադրության մթերքներ մատակարարելու հա-  
մար:

Այդ հանգամանքի շնորհիվ, խորհրդային իշխա-  
նությունը հնարավորություն և ստացել քաղա-  
քային ազգաբնակության պահանջներին բավա-  
րակրելու համար, պետական հացամթերութերի  
մեթոդի հետ միասին, կիրառել նաև այլ մեթոդ՝  
հացի վաճառումն իրենց՝ կոլտնտեսությունների  
և կոլտնտեսականների միջոցով: Խնդիրը վերա-  
բերում է նրան, վորպեսզի քաղաքի և գյուղի  
ապրանքաշրջանառությունն ել ավելի ընդար-

Ճակվի և քաղաքի ազգաբնակությանը մթերքներ  
հայթհաւթելու գործն ել ավելի բարելավելու  
նպատակով, համգրվեն այդ յերկու մեթոդները և  
կոլտնտեսական հացահատիկային առևտուրը  
ծավալվի ի հաշիվ պետական հացամթերումների  
վերոշ կրճատման գոռողացիական հատվածում,  
ավելացնելով միաժամանակ հացամթերումները  
խորհունուեական հատվածում:

Այս ամենի հիման վրա ԽՍՀՄ-ի ժողովրդական  
Կոմիսարների Խորհուրդը և ՀամԿ(Բ)Կ-ի կանորո-  
նական կոմիտեն ՎՈՐՈՇՈՒԻՄ ԵՆ՝

ա) Հացի 1932 թվականի բերքի պետական  
մթերման պլանը կոլտնտեսուրյաններում յեվ մենա-  
տեսեսուրյուններում - համեմատած 1931 թվականի  
հետ, նվազեցնել 264 միլիոն ֆթով, սահմանելով  
1932 թվականի համար 1103 միլիոն ֆթի պլան՝  
միջին բերքի պայմաններում (առանց աղունա-  
վարձի), փոխանականցյալ տարվա 1367 միլիոն  
ֆթի պլանի:

Դրա համաձայն, հացամթերման համար սահ-  
մանել հետեւալ պլանն ըստ շրջանների (առանց  
աղունավարձի):

Անկարգություն	356 մէջ՝ կորը՝ միաժամանակ անդաւահանակ տարվա 434 մէջ՝ կորը.
Հյուսնական պահանձում՝ 136	2
Հպիմում՝ . . . 10,0	2
Արհանտ, սեր, մարդկան թագավորությունում՝ 24	2
Հաղորդականություն՝ 38	2
Արդարիություն՝ 29	2
Միջազգային Արկանություն՝ 22	2
Մասնակիություն՝ 27	2
Արդարիություն՝ 29	2
Արդարիություն՝ 20 զ. . . 6	2
Լեհանինդարդի մասրդ՝ 4	2
Իդանինդարդի մասրդ՝ 4	2
Հայություն, յուրիկան մասրդ՝ 2	2
Հայություն, յուրիկան մասրդ՝ . . 4	2
Միջազգային Արկանություն՝ 4	2
Բնակչություն, Անհաջողություն՝ 7	2
Հայություն, յուրիկան մասրդ՝ 72	2
Ներքին վարչապետություն՝ 77	2
Բարգվագալություն . . . 26	2
Ուղարկություն՝ . . . 48	2
Արդարիություն, Միջազգային 62	2

բ) Խորհրդային տնտեսությունների աճմանը  
համապատասխան, 1932 թվականին բոլոր սիս-  
տեմների խորհանտեսություններում կատարվելիք  
հացամթերությունների պլանը ավելացնել 151 միլիոն  
փթով՝ անցյալ տարվա 108 միլիոն փթի փոխա-  
րեն, բաշխելով ըստ սիստեմների հետևյալ ձևով՝  
Զերնոտրեստի խորհանտեսություններում՝ 110  
միլիոն փութ, Սայուզսախարի խորհանտեսու-  
թյուններում՝ 20 միլիոն փութ, Սերմնաբուծական  
տրեստներում՝ 10 միլիոն փութ, արդյունաբերա-  
կան խորհանտեսությունների տրեստում՝ 5 միլիոն  
փութ. Անասնաբուծական խորհանտեսություն-  
ներում (միութենական և հանրապետական) 3  
միլիոն փութ, այլ հանրապետական խորհանտե-  
սություններում՝ 3 միլիոն փութ:

Խորհանտեսությունների հացամթերման պլանը  
բաշխել ըստ շրջանների հետևյալ ձևով՝

Ռէկրայնա . . . . .	29,0	միլիոն փութ
Հյուսիս կողման . . . . .	37,0	»
Դրիմ . . . . .	4,0	»
Ա.Սթեհ . . . . .	0,4	»
Միջին Ասիքա . . . . .	2,3	»
Ներքին Վոլգա . . . . .	12,0	»
Կենտ. սեփ մարզ . . . . .	10,0	»
Միջին Կոլգա . . . . .	16,0	»
Թաթարստան . . . . .	0,3	»

Ղազախստան . . . . .	4,0	»
Ուրալ . . . . .	8,5	»
Բաշկորթա . . . . .	5,0	»
Արեվմտ. Սիբիր . . . . .	13,5	»
Արեյելյան Սիբիր . . . . .	3,5	»
Լենինգրադի մարդ . . . . .	0,05	»
Արեվմտյան մարդ . . . . .	0,35	»
Մոսկվայի մարդ . . . . .	0,8	»
Իվանովյան մարդ . . . . .	0,2	»
Նիժեգորոդսկի յերկ . . . . .	0,1	»
Հեռավ. արեվյել. յեր . . . . .	4,0	»

գ. Հացի 1932 թվականի բերքի մթերութերն  
ավարտել ամենաուշը մինչև 1933 թվականի հուն-  
վարի մեկը:

դ) Կոլտնտեսություններում սերմացվի ֆոնդերի  
հավաքումն ավարտել ամենաուշը մինչև 1933  
թվականի հունվարի 15-ը:

լե) Նպատակահարմար համարել հացամթերման  
սուլն պլանի կատարումն ու սերմֆոնդերի հա-  
վաքումն ավարտելուց հետո, այսինքն 1933  
թվականի հունվարի 15 ից, լիակատար հնարա-  
վորություն տալ կոլտնտեսություններին ու խորհ-  
անտեսություններին, անաբգել վաճառել իրենց  
հայեցողությամբ, սեփական ավելորդ հացահատիկը  
թե շուկաներում և թե իրենց կոլտնտեսական  
խանութներում, պարտավորեցնելով իշխանու-

թյան տեղական որդաններին՝ այդ գործում լիա-  
կատար աջակցություն տալ կոլտնտեսականներին  
և միջոցներ ձեռք առնել կատարելապես վերաց-  
նելու մասնավորներին և սպեկուլյանտ միջնորդ-  
ներին, վորոնք աշխատում են հարստանալ կոլ-  
տնտեսական առևտրի հաշվին:

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐ-  
ՀՄԴԻ ՆԱԽԱԳԱՅ Վ. Մոլոտով (Սկրյաբին).

ՀԱՄԿ (Բ) Կ. Կենտկոմի ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Ի. Ստալին.  
Մոսկվա, Կռելմ-«ը» մայիս 1932 թ.

## Վ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՄԴԻ  
ՅԵԿ. ՀԱՄԿ Կ (Բ) ԿԵՆՏԿՈՄԻ

«Անասնամբերման յեկ կոլտնտեսականների ու մե-  
նամասնես աշխատավոր գյուղացիների մաս առեվտրի  
պլանի մասին»

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴը  
և ՀԱՄ. Կ (Բ) ԿԵՆՏԿՈՄԻ ԿՈՄԻՏԵՆ Վ Ո Ր Ա-  
Շ Ո Ւ Մ ԵՆ

1. Կրկնապատճեն նվազեցնել կոլտնտեսությունների  
կոլտնտեսականների և մենամասնեսությունների կա-  
յտարելիք մնացորդ մսամթերման 1932 թ. 3 յեռամ-  
ակի պետական պլանը այն ե սահմանել 716 հազար  
տոնն կենդանի քաշով՝ գործող պլանի 1.414 հազար  
տոննի փոխարեն, միաժամանակ Խորհինտեսություն-  
ների կողմից անասուններ հանձնելու պլանը (բացի  
առևտրական իրացումից) հասցնել 138 հազար  
տոննի՝ 1931 թվականին փաստորեն հանձնված

90,000 առնի փոխարեն՝ հաշված կենդանի քաշով:

## 2. Դրան համապատասխան՝

ա) Կոլտնտեսություններում, կոլտանահաների ու մենատանօսություններում 1932 թվականի 3 տեսանտեսակում կատարվելք անառնաբթերում պլանու բաշխելը առնելի հատկագութեամբ՝

## քայլակությամբ՝

1. Հյաստառային յիշեկիր՝ . . . . .	6,000 ար. հանդեպ դրամով պլանի 7400 ար.
2. կալիգրաֆի ՍԱԾ՝ . . . . .	500 ար. Ճ 670 ար.
3. ԱԵՆ կողմաղի մարդկան մարդկան մարդկան՝ . . . . .	15,000 ար. Ճ 22,060 ար.
4. Արևատան մարդկան մարդկան՝ . . . . .	38,000 ար. Ճ 57,100 ար.
5. Մասկայի մարդկան մարդկան՝ . . . . .	20,000 ար. Ճ 25,500 ար.
6. Իվան արդի, մարդկան մարդկան՝ . . . . .	12,000 ար. Ճ 15,500 ար.
7. Նիժնի Նովգորոդ յիշեկիր՝ . . . . .	40,000 ար. Ճ 25,820 ար.
8. Ուրալի մարդկան մարդկան՝ . . . . .	32,000 ար. Ճ 59,700 ար.
9. Բաշկիրի ԱՍԾ՝ . . . . .	12,000 ար. Ճ 41,600 ար.
10 Թաթարստանի ԱՍԾ՝ . . . . .	6,000 ար. Ճ 9,800 ար.
11. ՄՇՀին. Վրուի. յիշեկիր՝ . . . . .	21,000 ար. Ճ 52,500 ար.
12. Կենացր. Սևան. Հայրդական մարդկան՝ . . . . .	20,000 ար. Ճ 33,300 ար.
13. Ներքին Վարդի. յիշեկիր՝ . . . . .	26,000 ար. Ճ 84,000 ար.

## 14. Հյաստափա. Կողկազաւ. յիշեկիր

(Քաղաքա. Հայ միասնին)	44,500 ար.	Ճ 108,300 ար.
15. Արքայ ԱՍԾ՝ ԱՍԾ՝ . . . . .	3,000 ար. Ճ 3,500 ար.	
16. Կազախստանի ԱՍԾ՝ . . . . .	56,000 ար. Ճ 255,500 ար.	
17. Խելքաստանի ԱՍԾ՝ . . . . .	24,000 ար. Ճ 46,400 ար.	
18. Արևմտյան Ակր. յիշեկիր՝ . . . . .	45,000 ար. Ճ 108,900 ար.	
19. Արևելյան Սէրէկի յիշեկիր		

(Բալյաստու-Սոնգովի աՍԽՀ՝

հետո միասնին)	35,000 ար.	Ճ 92,500 ար.
20. Յալաբէտայի ԱՍԾ՝ ԱՍԾ՝ . . . . .	4,000 ար. Ճ 5,700 ար.	
21. Հեռավոր Արև. յիշեկիր	5,000 ար. Ճ 12,700 ար.	
22. Ռումանիայի Սիէ ԱՍԾ՝ . . . . .	130,000 ար. Ճ 181,200 ար.	
23. Բահրամբայի Սիէ ԱՍԾ՝ . . . . .	38,000 ար. Ճ 45,100 ար.	
24. ԱՍՖին. ԱՍԾ՝ . . . . .	28,000 ար. Ճ 38,300 ար.	
25. Մեջն Ասին	45,000 ար. Ճ 74,600 ար.	

բ) Խորհիսկանորյանինիցի անասնամթերման պլանը (բացի առևուլը կազմական իրացուալից) բաշխել ըստ հետաքալ սիստեմիների՝ 48 հազ. առևուլ աշխատավորություն, 30 հազ. տոնն սկզբանի լորու մասին:

հազ. տոնն ՈՎՃԵՎՈՒԴՈՒՄ, 8 հազ. տոնն ՍԱՅՈՒՀԾԱԽԱՐՈՒՄ, 10 հազ. տոնն յուղագործական ժիշտուման մեջ, 9 հազ. տոնն մյուս խորհանտեսություններում:

Խորհանտեսությունների անասնամթերման պլանը հետևյալ ձեվով բաշխել ըստ շրջանների՝

1. Ուկրայինա . . . . .	37,5	հազ. տ.
2. Հյուսիսային կովկաս . . . . .	13,8	հազ. տ.
3. Կենտր. Աւան. մարզ . . . . .	11,9	հազ. տոնն
4. Ներքին Վոլգա . . . . .	11,2	» »
5. Միջին Վոլգա . . . . .	8,5	» »
6. Ղազախանի ԱՍԽԱՀ . . . . .	20,5	» »
7. Արևմտյան Սիբ. յերկ . . . . .	13,3	» »
8. Արևելյան Սիբիրի յերկիր . . . . .	1,9	» »
9. Կիրդիզիայի ԱՍԽԱՀ . . . . .	5,75	» »
10. Ղրիմի ԱՍԽԱՀ . . . . .	0,27	» »
11. Հնուազը. Արևելյան յերկիր . . . . .	0,71	» »
12. Ուրալի մարզ . . . . .	4,0	» »
13. Բաշկիրիայի ԱՍԽԱՀ . . . . .	2,0	» »
14. Թաթարստանի ԱՍԽԱՀ . . . . .	1,1	» »
15. Ա.ՍՖԽԱՀ . . . . .	1,2	» »
16. Մեջմ. Ասկա . . . . .	4,3	» »

3. Անասնամթերման պլանը սահմանելիս, նկատի առնել կենդանի քաշը, վորագեղի տնտեսությունները կարողանան պլանը կատարել ուղած տեսակի անասուններով:

4. Վերացնել թե գլուղական ազգաբնակության սեփական կարիքների և թե վաճառելու համար խոշոր էեղջյուրավոր և մանր անասուններ մորթելու բոլոր սահմանափակութմները:

5. Համարել նպատակահարմար անասնամթերման կենտրոնացած պլանը կանոնավոր կատարած կոլտնտեսություններին, կոլանտեսականներին և մենատնտեսներին լիակատար հնարավորություն տալ անարգել վաճառելու իրենց տնտեսության խոշոր անասունները, խոզերը, վոչխարները, թռչունները և ամեն տեսակ մսամթերքը շուկաներում և կոլտնտեսական խանութներում:

6. Արգելել իշխանության տեղական որդանաներին՝ վորևե սահմանափակում մտնել կոլտնտեսությունների, կոլտնտեսականների և մենատնտեսների իրենց տնտեսության մասմթերքը վաճառելու գործում, կատարելագույն վերացնելով մասնավորներին ու չարաշահ միջնորդներին, վորոնք փորձում են հարստանալ աշխատավոր գյուղացիների մասի առևտրի հաշվին:

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴՅԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈԲՀՔԴՐԱ ՆԱԽԱԳԱՅ Վ. ՄԱՐՏՈՎ (Սկրաբին) ՀԱՄԿ. (բ) Կ-ի ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ի. ՍՄԱԼԻՆ

» 10 » Մայիսի 1932 թ.

ԿՌԵՄՄ

## ՎՈՐՈՇՈՒՄ

ԽՍՀՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԹԻ ՅԵՎ  
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՃՐԴԻ

«Կոլտնեսուրյուների, կոլտնեսականների յեվ մենա-  
սնես աշխատավոր զյուղացիների առեվտրի հարկի  
եվ զյուղացնեսական մթերքների առեվտրի հարկի  
պակասեցման կարգի մասին»

ԽՍՀՄ Ժողկոմիսորի և համկոմկուսի կենտկոմի  
1932 թվի Մայիսի 6-ին և 10 ի վորոշումների  
հիման վրա՝ կոլտնտեսությունների, կոլտնտեսա-  
կանների և մենատնտես աշխատավոր զյուղացի-  
ների սեփական գյուղատնտեսական արտօնու-  
թյան մթերքների առևտրի ծավալման համար՝  
ԽՍՀՄ կենտրոնական ֆարմադիր կոմիտեն և ժո-  
ղովրդական հռմիսարների Խորհուրդը ՎՈՐՈՇՈՒՄ  
են՝

1. Վերացնել՝ կոլտնտեսությունների, կոլտնտե-  
սականների և մենատնտես աշխատավոր զյուղա-  
ցիների կողմից շուկաներում, հրապարակներում,


յերկաթուղարին կայալաններում և նավահան-  
գիստներում՝ սեփական գյուղատնտեսական  
արտօնության մթերքների (հաց, միս, թոչուն,  
ձու, կաթնամթերքներ, բանջարեղեններ, պտուղ-  
ներ և այլն) վաճառքից գանձվող բոլոր տեսակի՝  
ինչպես հանրապետական, այնպես և տեղական  
հարկերն ու տուրքերը».

2. Շուկաներն մաքուր պահելու և շուկաների  
պահպանման ծախքերը ծածկելու համար թույլ ե  
տրվում սահմանել տեղական միանվագ տուրք,  
ընդունում այդ տուրքը պետք և գանձվի վոչ  
ավելի քան հետեւյալ չափով՝ սայլից՝ 1 ոուրլի,  
ձեռքի, պնակի և նման առևտրի զեպքում՝ 20  
կոպեկ, խոշոր յեղջուրավոր անասունից՝ 1 ոուրլի,  
մանր յեղջուրավոր անասունից՝ 50 կոպեկ:

3. Արգելել տեղական միանվագ տուրք զանձելը  
կոլտնտեսականների և մենատնտես աշխատավոր  
գյուղացիների կողմից կատարվող թոչունների,  
ձվի, կաթի, յուղի և պանիրի ձեռքի առևտրից:

4. Պարտավորեցնել տեղական խորհուրդներին  
առավելագույն չափով՝ իջևնել կոլտնտեսական  
արկղներից, կրպուկներոց և խանութներից գանձ-  
վող կապալավագած՝ չափ:

5. Սահմանական լոր շահմաններում կոլտնտեսու-



թյուռների և կոլտնտեսակաների կողմից սեփական գյուղատնտեսական արտադրության մթերքների վաճառքից ստացված յեկամուտներն ազատվում են գյուղատնտեսական հարկից:

6. Սահմանել, վոր աշխատու վոր մենատնտեսությունների կողմից սեփական գյուղատնտեսական արտադրության մթերքների վաճառքից ստացված յեկամուտները հարկվում են գյուղահարկի համաձայն՝ վոչ ավելի քան առերի յեկամուտի 30 տոկոսը, համապատասխան ձեռք փոխելով 1932 թ. գյուղմիսհարկի կանոնադրության 50 հոդվածը:

7. Սահմանել, վոր այդ արկդները, տաղափարները և կրպակները, վորոնք անմիջապես կոլտնտեսություններն են բաց անում իրենց գյուղատնտեսական արտադրության՝ մթերքները վաճառելու համար տուրքատրվում են իրենց բջանառության նվազեցրած չս փով՝ ընդհանուր եկամտի 3 տոկոսի սահմաններում:

8. Կոլտնտեսալին միավորումների և միությունների (բջանային՝ մարզային, լերկրային, հանրապետական և Միութենական) կողմից բացված կրպակները և խանութներն ուժվում են նույն հարկային արտոնություններով, ինչ վոր կոռպերացիան:

9. Կոլտնտեսությունների, կոլտնտեսականների և մենատնտես աշխատավոր գյուղացիների առետուրը տեղի լեռնենալու շուկայում առաջ յեկող

գներով, իսկ կոլտնտեսալին միավորումների առետուրը՝ պետական առևտորի միջին վաճառականական գներից վոչ բարձր գներով:

10. Թուլլ չտալ մասնավոր առևտրականներին խանութներ և կրպակներ բացելու, ամեն կերպ արմատախիլ անել միջնորդներին և չարաշանեներին, վորոնք փորձում են հարստանալ բանվորների և գյուղացիների հաշվին:

11. Առաջարկել դաշնակիք Հանրապետությունների կենտրոնական Գործադիր Կոմիտեներին անհապաղ վերացնել այն բոլոր վորոշումները և կարգադրությունները, վորոնք հակասում են ներկա վորոշմանը:

ԱՀՄ կենտրոնական ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՆԱԽԱԳԱԶ.

Մ. Կալինին,

ԱՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՄԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱԶ

Վ. Մոլոտով (Սկրյարին)

ԱՀՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

(Ա. Յեմուկիձե)

Մասկա. Կրեմլ 20 մայիսի 1932 թ.

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ  
ԵԵՎ ԱՇԽԱՏԱՎԱՐՄԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԱՌԵՎՏՏԻ ՄԱՍԻՆ

ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախա  
գահուրյան փորձումը

1932 թ. մայիսի 23

Համաձայն ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմ-  
խորհի սույն թվի մայիսի 20-ի վորոշման՝ «Կոլ-  
տնտեսությունների, կոլտնտեսականների և ան-  
հատական աշխատավորական տնտեսությունների  
առևտորի մասին» — ՀՍԽՀ Կենտրոնական Գործա-  
դիր Կոմիտեի նախագահությունը վորոշում ե. —

1. Վերացնել այն բոլոր վորոշումներն ու կար-  
գադրությունները, վորոնք հակասում են ԽՍՀՄ  
Կենտգործկոմի և Ժողկոմխորհի մայիսի 20-ի վե-  
րոհիցաւ վորոշմանը:

2. Առաջարկել ՀՍԽՀ Ժողկոմխորհին, ինչպես և  
առանձին ժողկոմատներին, քաղխորհուրդներին,


ըջուրձկոմներին և գուղխորհուրդներին՝ ան-  
հապաղ վերացնել այն բոլոր վորոշումները: Կար-  
գադրությունները և կանոնները, վորոնք հակա-  
սում են ԽՍՀՄ մայիսի 20-ի ներկա վորոշմանը:

3. Հանձնաբարվում ե բոլոր կենտրոնական և  
տեղական համապատասխան մարմիններին, հատ-  
կապես կենտգործկոմի Կազմբաժնին, մինչողկո-  
մատին, Մատֆսղկոմատին, Կոլտնտկենտրոնին և  
ընհանրապես խորհրդային հիմնարկություններին  
տնտեսական ձեռնարկություններին՝ բոլոր մե-  
ջոցները ձեռք առնել՝ արագորեն և լայնորեն ժո-  
ղովրդականացնելու այս վորոշումը, մասսայակա-  
նացնելու նրա քաղաքական ու տնտեսական  
կարևորագույն նշանակությունը՝ զյուղատնտե-  
սության սոցիալիստական վերակառուցման, բան-  
վորների կուտուր-կենցաղային պայմանների ա-  
ռավել բարելավման, զյուղի աշխատավորության  
տնտեսական վերելքի ասպարիզում:

Այս վորոշման մասսաբականացման համար ըս-  
տեղծել խորհրդային, աշխատավորական ակտիվ և  
լայն հասարակայնություն, հրավիրել կոլտնտե-  
սական և միջակ-չքավոր գյուղացիական խորհր-  
դակցություններ, լայն ոգտագործել կենտրոնա-  
կան և շրջանային մամուլը և այլն:

4. Միաժամանակ հրահանգվում ե պետական  
քիմիարկություններին և հասարակական կազմա-  
կերպություններին՝ թուլ չտալ մասնավոր առե-  
տրականներին խանութներ և կրավակներ բանալու  
ամեն կերպ արմատախիլ անելով միջնորդներին,  
չարաշահներին, փորոնք փորձում են հարստանալ  
քանվորների և գյուղացիների հաշվին:

ՀԱԽ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի  
նախադահ Ա. ԱՆԱՆՅԱՆ  
Կենտրոնական Գործադիր Կոմիտեի  
քարտուղար Ռ. ԴԱՇՏՈՅԱՆ



Ք. 7529 (բ) հ. № 2249 պատվ. № 2113 ամբաժ 10000

Պետհրատ Ցերկան

Մրգագրիչներ Ս. Տ. Պողոսյան, Ա. Շուղուրյան

Հանձնված ե արդյունաբերության 20 Ս. Փ. ա. 22

առողապրված ե տակելու

«Ազգային գրադարան



NL0404533

ԳՐԱՎ 15 ԿՈՊ. (1 մ.)

3380

73  
2р.



# НОВЫЕ ЗАКОНЫ О РАЗВЕРТЫВАНИИ КОЛХОЗНОЙ ТОРГОВЛИ

Госиздат ССР Армении  
Эревань — 1932